ները չլինին. վասն զի այս տեղերուն մէջ օդին՝ մթնոլորտին վերի գաւառներուն հետ ունեցած հանապազօրեայ շրջանն ու խառնուիլը՝ այս տեղերուն այնպիսի չափաւոր ու միակերպ բարեխառնութիւն կպատճառէ, որ անձրև յառաջ բերելու համար հարկաւոր եղած գոլորշիներու խըտութիւնը այս տեղերը չի պատահիր. Ասկէց զատ Պ. Դանիէլ բնագէտը կըսուի՝ որ ջրային գոլորշին շարունակ հասարակածային հողմերու ձեռքով մթնոլորտին վերի գաւառէն դէպի բարեխառն գօտիները կմղուի.

Հողմերուն՝ օդը վնասակար գոլորշիներէն մաքրելով ու զմեզ շնչարգելութենէ պահելով արած օգուտը այնպէս յայտնի է, որ և ոչ վրան խօսելու հարկ կլինի. Դէպի հասարակած և կամ հասարակածին կողմերէն դէպի բարեխառն գօտիներուն կողմերը փչած հողմերով օդոյ փոփոխութիւն կլինի, որն որ թէ այրեցած և թէ բարեխառն գօտիներուն համար շատ օգտակար է 1).

(Շարունակելի)

Ն. Պ. ՄԿՐՏԻՉ Ս. ՓԱՅՖԱՃԵԱՆՑ.

(1) Այս օգտակար նիւթիս վերայ Պ. Լիպիկ իր գործարանաւոր տարրալուծութեան կամ քիմիային մէջ (որ 1840-ին տպուած է) այսպէս կստորագրէ. «Թթուածին կազին բուն սեպհական, առատ ու անըսպառ աղբիւրները արեւադարձներուն կլիմաներն են, ու շատ քիչ կպատահի որ ամպերով լեցուած երկինք մը՝ արեգական ջերմաջերմ ճառագայթները տեւական տեսակ բոյսերուն վրայէն կյափշտակէ: Իսկ անոր հակառակ բարեխառն ու ցրտային գօտիները, ուր որ արեւուն տաքութիւնը պակաս է, ու անոր տեղը արհեստական ջերմութիւնը պէտք է որ լեցնէ, միօրինակ սաստիկ շատ ածխածին (ածխոյ թթուութիւն, որ վնասակար կազ մի է) դուրս կուտան, որն որ այրեցած գօտույն տնկերը սնուցանելու կծառայէ: Երկրիս դառնալովը հասարակածին կողմէն դէպի բեւեռները վազող օդոյ հոսանքը մեզի հասարակածին կողմերէն թթուածին կբերէ, իսկ ձմեռուայ ժամանակը մեր կողմերը եղած ածխածինը կառնէ հասարակածին կողմերը կտանի: Սօսիւրին ձինեւա արած փորձերը ցոյց տուին, որ օդոյն վերին գաւառները աւելի ածխածին կայ, քան թէ վարի կարգերը, ուր որ տնկերը, եւ թէ այս ածխածինը գիշերը աւելի է քան թէ ցերեկը, վասն զի տնկերը ցորեկը ածխածին կըծծեն ու կուլ կուտան: Ուրեմն այս կերպով տնկերը օդը կմաքրեն, վասն զի ածխածինը օդոյն մէջէն կըհեռացնեն ու թթուածինը կնորոգեն, այս ինքն, արեւուն միջնորդութեամբը իրենցմէ նոր թթուածին օդ դուրս կուտան, որն որ թէ մարդկան եւ թէ անասուններուն համար անհրաժեշտ հարկաւոր է: Օդոյն հորիզոնական հոսանքը այնչափ թթուածին կբերէ, որչափ որ ածխածին կտանի, ու մթնոլորտին վերի գաւառներուն՝ տարիներուն հետ ըրած տուրեւ առը, որն որ նոցա բարեխառնութեան աստիճանէն կախում ունի, հողմերուն հորիզոնական շարժմանը հետ համեմատելով, շատ նուազ է: Երկրագործութիւնը ու տնկերու մշակութիւնը մի երկրի առողջութեան վիճակը շատ կլաւացնէ, եւ ըստ ինքեան առողջ օդ ունեցող երկիր մը՝ մշակութիւնը դադարելով՝ կրնայ չըբնակելու ու վատառողջ երկիր լինիլ»:

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

(Շարունակութիւն և վերջ)

‘‘Մարդ բարի ի բարի գանձուց իւրոց բերէ զբարի,,:

(Ս. Ա.-եա)

Արդ՝ մինչդեռ ի ներկայս ամենայն զօրութեամբ կուռ փառուած դաստիարակութեան խնդիր կշարժի, կքարոզուի, մեծ ջանիւք նորա համար կարևորները կհոգացուին, և ինչպէս համայն բանիմաց և ողջամիտ անձինք կատարելապէս համոզուած են, նոյնպէս այլոց քարոզ և յորդոր կուզղեն, զի առանց դաստիարակութեան և կրթութեան՝ չէք ապահով կեանք և երջանկութիւն, և թէ զայն ընդհանրացնելով և արդիւնաւորելով Հայոց մէջ՝

Հայկական բարեյոյս և երջանիկ ապագայի հաւատալիք և երաշխաւորութիւն կը տուի, մի՛թէ տխրալից և ցաւալի չէ՞ տեսնել՝ զի օտարապայման և Հայոց օգտի հակառակ դաստիարակութեան շնորհիւ՝ այժմ հակառակը կվստահիմք՝ և գոգցես մեք ինքնին մեզ կխաբեմք: Որով մինչև անգամ ոմանք ի մերայնոց երբեմն պարտաւորուեցան ասել, թէ՝ փրկարար քարոզուած ուսումն՝ աւելի ի կորուստ կառաջնորդէ մեզ, և երբ մեք ուսումնականներէն մեծայոյս էինք, կտեսնուի՝ զի նոքա ոչ թէ միայն միմեանց հակառակ են, այլ և աւելի վնաս և հարուած կտան մեր Ազգի և Եկեղեցւոյ:

Ուրեմն ինչպէս էր և պիտի լինէր դաստիարակութեան արդիւնքն:

Ամեն ծնող՝ այսպիսի՞ նպատակաւ կը ջանայ իւր որդիքը դաստիարակել, գումարներ կծախսէ, գիշեր և ցերեկ կաշխատի, կմտածէ, կհեւայ և ոչ ինչ չխնայեր իւր որդւոյ դաստիարակութեան համար, և որքա՜ն մեծ կլինի նորա վիշտ և սիրտն կհարուածվի՝ երբ կտեսնէ իւր որդւոյ դաստիարակութեան դառն պտուղները, պտուղներ՝ որք իւրեանց ծնողաց ծնողական իրաւունքը և արժանիքը ոչ կյարգեն և ոչ կճանչնան, ծնողաց չեն հաւանիր, երբ ի նոցանէ բարի խրատ կլսեն՝ միմիայն անգոսնելով կպատասխանեն, կատեն նոցա Ազգութիւնը և Կրօնը, վերջապէս այնպէս կձևանան՝ իբր զի նոքա ծնողք չունին: Թողումք յիշել և այն ծնողները՝ որք իւրեանց որդւոց դաստիարակութեան համար՝ ինչ որ կար և կարողութիւն ունէին կամ ունեցած են՝ բոլորն անխնայ կծախսեն կամ ծախսած են՝ այն յուսով, զի երբ նոցա դաստիարակութիւն կաւարտուի, այնուհետև նոցա խնամոց ներքև կարող են ապրել և կենցաղավարել: — Ո՛հ, խաբուսի՜կ յոյս:

Այսպիսի՞ նպատականաւ Ազգն համայն և սուրբ Եկեղեցին մեր՝ ըստ ներելոյ միջոցացն՝ գումարներ կնուիրէ իւր սերունդը և որդիքը դաստիարակելու համար, և քանի՜ դառն է տեսնել՝ որ իւր նպատակին և բաղձանաց ներհակ դաստիարակութեամբ կրթուած անդամներ կստանայ, որք իւրեանց հարազատ մարմնոյ վերայ փոխանակ օգտատու և պիտանի լինելոյ՝ աւելի ևս մեծ վէրք տալոյ կջանան, իւրեանց ազգութեան նկատմամբ կամ անտարբեր կլինին, և կամ ընդդէմ կլինուին՝ և զԵկեղեցին անհետ ջնջել կնկրտին:

Սակայն մի՛թէ ի սոցանէ տարբեր՝ կամ թէ փոխանակ աւելի դառնապտուղ արդեանց՝ կարո՞ղ եմք և ներելի՞ է յուսալ աւելի ինչ՝ քանի որ ողջամիտ տրամաբանական գաղափարը իւր բոլոր և բուն նշանակութեամբ ի կշիռ առնուած չէ, ցորչափ՝ դաստիարակութեան անհրաժեշտ պայմանաց նկատմամբ անտարբեր մնացած եմք, և քանի որ անխտիր ամենայն տեղ տրամաբանական գտանել և առնուլ կփութամք՝ առանց զգուշաւոր հեռատեսութեան:

Ի՞նչ տարբերութիւն կգտնուի յարտաքուստ գեղեցկայարդար՝ իսկ ի ներքուստ քարշահոտ գերեզմանաց՝ և առերեւոյթս եւրոպական ելն. լեզուներ և գիտութիւններ գիտել պարծեցող՝ իսկ առ Ազգն՝ Եկեղեցին՝ ընտանիսն՝ մինչև անգամ երբեմն իւր անձին նկատմամբ վա-

*տաճկօղի և անբարոյական մարդկան մէջ։*

*— Ի՞նչ է պատճառն։*

*Եթէ ոչ այն՝ որ դաստիարակութիւնը կխնամեմք և կփնտռեմք միայն՝ այո և մի միայն ֆրանսական պանսիոնում մէջ՝ առանց ընդ նմին և աւելի ուշ դնելոյ ֆրանսական պատրաստական—նէրուն կամ պանսիոնում, որով շատ լեզուներ՝ գիտութիւններ և առարկաներ ուսուցանելոյ արդիւնքը կգտանեմք, իսկ բարի և առաքինի մարդ և անդամ՝ և ուսածները ի բարին արդիւնաւորող որդիք և եղբայրներ չեմք գտներ։*

*Օրինակ առէք որ և իցէ մի արհեստաւորի՝ կամ թէ ոսկերչի աշակերտը, որ թէև արհեստին քաջահմուտ է, բայց ընդ նմին վատ ազդեցութեանց ներքև շատ մոլութիւններ և զզուելի վարք և բարք ստացած է և կապրի, որով գրեթէ անառակ կենցաղավարութեամբ՝ ոչ անձին և ոչ այլոց համար օգուտ և արդիւնք ունի։ Այսպիսին սիրող կգտնուի՞, չէ՞ որ՝ բաց ի նմանեացն՝ ամեն մարդ կանարգէ և ինքմանէ կզգուշանայ։*

*Այսպէս պէտք է խնամել և բաղդատել դաստիարակութեան խնդիրը։*

*Բնական չէ՞ մոռանանք թէ առաւել ևս վատ է և դառնապատուղ արդիւնք կունենայ՝ միայն և եթ մտաւորական զարգացման համար խնամել դաստիարակութիւնը և այնպէս հետևել ուսումն տալ, այլ պէտք է նկատել տեղը (ուսումնարանը)՝ ուր դաստիարակութիւնը կաւանդուի և աշակերտն ախոր ուսանի, վերատեսչին և դասատուաց մտաւորականէն աւելի ֆրանսական կոլէ—ժէ—նը և լիսէ—նէ—ը, ուսումնարանին ում սեփհական և ինչ ուղղութեան մէջ գտնուիլը, դասաւանդելի առարկայքը, դասուց ընթացքը, դասաւանդութեանց պարզութիւնը և անկեղծութիւնը, միանգամայն ուսումնարանին ներքին կանոնադրութեան բուն նպատակը։*

*Այսպիսի և աւելի անհրաժեշտ պայմանները եթէ յաւէտ նախանձախնդրութեամբ նկատուին և ուշադրութեանց ենթարկուին, անշուշտ բարի և ողջամիտ դաստիարակութեան շնորհիւ՝ աշակերտեալքն կըսնանին կրկին բարի գանձերով և կմթերեն բարի բարի նիւթեր և պաշարներ իւրեանց մտաց՝ բարուց՝ և վարուց մէջ, և յայնժամ իրաւամբ կպահանջուի և կը գտնեմք բարի գանձէն բղխած բարի արդիւնքներ։*

*Այս առթիւ Թեմական Առաջնորդաց՝ բոլոր եկեղեցական պաշտօնէից՝ դպրոցական Հոգաբարձութեանց՝ ինչպէս նաև համայն Ազգիս խորին և արթուն ուշադրութիւնը արժան և անհրաժեշտ կդատեմք հրաւիրել դաստիարակութեան բարոյական մասի վերայ, և ըստ այսմ աչալրջութեամբ նկատել երկուց սեռից Հայկազն մանկանց կրթութիւնքը, միանգամայն նոցա վերայ տիրել նկրտող վատ ազդեցութեանց դէմ քաջ վանել և դիմակալել։*

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.